ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 316 – Ա

«ՎԵՐԻՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆԱԻՐԱ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.7-րդ կետով, 3-րդ մասի «ա» կետով և հիմք ընդունելով Ա. Բաբայանի և Ն. Լևոնյանի դիմումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. 2026 թվականի հուլիսի 3-ից դադարեցնել «Վերիշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Բաբայանի լիազորությունները և լուծել նրա հետ 2021 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված N 33 աշխատանքային պայմանագիրը:

2. 2026 թվականի հուլիսի 3-ից «Վերիշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Նաիրա Լևոնյանին, կնքելով աշխատանքային պայմանագիր՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքի վերացումը:

2026-07-02 18:13:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 2
Ք. Կապան